

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՄԱԿԱՐԴԱԿ

Իրանի պաշտպանության նախարար Մոհամմադ Աշթիանի, ժողով գումարել է ետք Ռուսական Դաշնության պաշտպանության նախարար Սերգեյ Շոյկուի հետ Ալբանայի մեջ, յայտարարեց, թե երկու երկիրներուն միջև յարաբերութիւնը բարձրացաւ նոր մակարդակի: Ան շնորհակալութիւն յայտնեց Ռուսական Դաշնութեան պաշտպանութեան նախարարին՝ անոր ներկայացուցած նեցուկին համար բոլոր միջազգային հարթակներու վրայ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Լիբանանի կառավարութիւնը իր վերջին ժողովին յետ-աձգեց լիբանանեան բանակին տրուելիք 7 միլիոն ԱՄՆ տոլարի օժանդակութիւնը: Կառավարութիւնը որոշեց ֆինանսաւորել հարաւային Լիբանանի մայրուղիի ծրագիրը:



Ժողովի աւարտին, վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միշաթի յայտարարեց, թէ լիբանանեան բանակի ֆինանսաւորումին համար մօտ օրէն պիտի գումարով համագումար մը: Իսկ սուրիացի գաղթականներու թղթա-ծրարը կը փորձեն սերտել նկատի առնելով մարդկային իրաւունքը: Նպատակն է լուծել այս հարցը ըստ օրէնքի առանց վտանգելու Լիբանանի ապահովութիւնը ու խախտելու սուրիացի գաղթականներու մարդկային իրաւունքը, վերադառնալու իրենց երկիրը եթէ կարելի է:

ԵՐԿԻՐԸ ՊԻՏԻ ԱԶԱՏԱԳՐԵՆԸ ԻՐԱՆԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԵՆԸ

Լիբանանի Փաղանգաւոր կուսակցութեան երեսփոխան Նատիմ ժըմայէլ յայտարարեց, թէ ինչպէս որ երկիրը



ազատագրեցին սուրիական գրաւումէն, գայն պիտի ազատագրեն նաեւ իրանեան գրաւումէն ու ոճիրէն, լիբանանցիներուն միասնակամութեամբ:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՐԱՄԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ

Յրգայլալայի տեղեկատուական աղբիւրներ ցոյց տուին այն գործողութիւնը, որ տեղի ունեցաւ Զֆարշուպայի մէջ իսրայէլեան ուժերու դէմ:



Իսրայէլեան ուժեր յարձակում գործեցին Մայտուն գիւղին շուրջ ինքնաշարժի մը վրայ: Երկու զոհեր արձանագրուեցան ինքնաշարժին մէջ:

ՊԵՆ ՂԱՖԻՐ ՎԻՐԱՎՈՐ

Իսրայէլեան թիւ 13 պատկերասփիւռի կայանը հաղորդեց, թէ ազգային ապահովութեան նախարար Էթիմար Պեն Ղաֆիրի ինքնաշարժը տապալած է ու ան վիրաւոր-



ած եւ հիւանդանոց փոխադրուած է: Ան չէ կանգնած կարմիր լոյսին ու ինքնաշարժը բախած է միւս կողմէն եկող ինքնաշարժին ու տապալած է: Ըստ ստոյգ աղբիւրի մը, Պեն Ղաֆիրի ինքնաշարժը չէ կեցած կարմիր լոյսին, որովհետեւ կեանքը վտանգուած էր: Արկածը տեղի ունեցած է Ռամլէ քաղաքին մէջ, այն վայրին մօտ, ուր իսրայէլացի երիտասարդուհի մը դաշունահարուած ու ծանրօրէն վիրաւորուած էր պաղեստինցի երիտասարդի մը կողմէ, որ սպանուեցաւ իսրայէլեան ուժերուն կողմէ:

«ՊԻՏԻ ԶԸՆԴՈՒՆԻՆԸ ԴԱՏԱՐԱՆԻՆ ԿՈՂՄԵ ՈՐԵՒԷ ՓՈՐՁ»


Իսրայէլի վարչապետ Պենիափին Նեթանիահու յայտարարեց, թէ պիտի չընդունին Լահէյի մէջ գտնուող Միջազգային քրեական դատարանին կողմէ որեւէ միջամտութիւն Իսրայէլի պաշտպանութեան իրաւունքին արգելք դառնալու համար:



Ան աւելցուց, թէ Իսրայէլի քաղաքական գործիչներու եւ բանակի զինուորներուն դէմ սպառնալիքը անընդունելի է: Նեթանիահու աւելցուց, որ պիտի շարունակեն պատերազմը ահաբեկիչներուն դէմ մինչեւ յաղթանակ: Ըստ իրեն, թէ՛ դատարանին վճիռը պիտի չազդէ իրենց գործունեութեան վրայ, սակայն վտանգաւոր քայլ կը համարուի:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԶԱՅՆԵՐ

Եգիպտական աղբիւրներ յայտարարեցին, թէ ցուցմունքներ տրուած էր Եգիպտոսի հիւսիսարեւելեան կողմը



գտնուող Նահանգներու պատասխանատուներուն: Եգիպտոս արտակարգ քայլեր պիտի սկսի առնել Երեքշաբթի օրուընէ սկսեալ՝ Ռաֆահի մէջ սկսելիք զինուորական գործողութեան պատճառով: Ըստ նոյն աղբիւրին, Միացեալ Նահանգներ չի փորձեր արգիլել գործողութիւնը, այլ անոր քայլերը միայն հետեւանքները սահմանափակելու համար են:

«ՊԱՂԵՍՏԻՆԻ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՊԵՏԵ Է ԸՆԴՈՒՆՈՒԻ»

Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Յաքան Ֆիտան յայտարարեց, թէ միջազգային ընտանիքը պէտք է ընդունի Պաղեստինի պետութեան հաստատումը ըստ



միջազգային օրէնքի: Ըստ Ֆիտանի, ազգայնամուլութիւնն է պատճառը պաղեստինցիներու կրած տառապանքին: Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան յայտարարած էր, թէ դադարած է Թուրքիա-Իսրայէլ առեւտրական յարաբերութիւնը: Ան ամբաստանած էր Իսրայէլը Կազայի հատուածը կործանելու ամբաստանութեամբ:

ԼԱՐՈՒԾՈՒԹԵԱՆ ՅԱՒԵԼՈՒՄ

Ամերիկեան համալսարաններու մէջ լարուածութեան յաւելում արձանագրուեցաւ, բողոքելու համար Կազայի



մէջ կատարուած սպանդին դէմ: Ամերիկեան բոլոր համալսարաններուն մէջ կ'արձանագրուի լարուածութեան յաւելում: Բողոքող ուսանողները վրան կը լարեն ու նստացոյց կը կատարեն: Ոստիկաններ կը գործադրեն համալսարաններու տնօրէնութեան որոշումը՝ արգիլելու բողոքի շարժումը:

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՇՈՒՄԸ ՊԵՏԵ Է ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ»

Ատրպէյճանի կողմէ ապօրինաբար բանտարկուած հայ քաղաքական գործիչ Ռուբէն Վարդանեանի որդին՝ Դաւիթ Վարդանեան հարցազոյց կատարած է «France 24» պատկերասփիւռի կայանին հետ: Ան շնորհակալութիւն յայտնած է Ֆրանսայի ժողովուրդին այն նեցուկին համար, որ կ'արտայայտէ իր հոր: Ան յայտարարած է, թէ իր հոր դա-



տավարութեան հողովոյթը թափանցիկ չէ: Ան աւելցուցած է, որ հոր ձերբակալութենէն ի վեր շատ քիչ տեղեկութիւն հասած է իրենց հոր մասին: Դատավարութիւնը տեղի պիտի ունենար Յունուարին, սակայն անորոշ պատճառներով յետաձգուած է մինչեւ Մայիս: 5 Ապրիլէն սկսեալ, Ռուբէն Վարդանեան հացադուլ յայտարարած է: Անոր առողջական վիճակը անկում կ'արձանագրէ:

Ատրպէյճանի իշխանութեան վրայ Ֆրանսական ճնշումէն ետք, Վարդանեանին թոյլ տուած են հեռախօսով խօսիլ իր ընտանիքի անդամներուն հետ: Ան առժամաբար դադարեցուցած է հացադուլը: Վարդանեանի որդին յայտարարեց, թէ հայրը մեկնած էր Արցախ ազգային նպատակէ մղուած, օժանդակելու համար արցախահայութեան:

28 ՍԱՐՄԱՆԱՅԻՆ ՍԻՒՆ

Յայաստան-Ատրպէյճան սահմանին վրայ, ըստ չափումներու, հաստատուած են 28 սահմանային կէտեր: Այս կը



կազմէ հաստատուելիք կէտերուն 35 առ հարիւրը: Այս լուրը կը տեղեկացնէ Յայաստանի Յանրապետութեան կառավարական աղբիւրը:

ԶԻՆԱՍԱՆ ԿՐԱՅ ԴՐԱԿԱՆ ԴԵՐ ՎԵՐՅՆԵԼ

Միացեալ Նահանգներու արտաքին գործերու նախարար Անթոնի Պլինքըն յայտարարեց, թէ առանց Չինաստանի օժանդակութեան Ռուսիա պիտի չկարենայ շարունակել պատերազմը Ուքրանիոյ մէջ: Ան աւելցուց, որ ի-



րենց չինական կողմին արտայայտած են իրենց մտահոգութիւնը՝ Չինաստանին Ռուսիոյ ներկայացուցած օժանդակութեան մասին:


Պլինքըն աւելցուց, որը դէմ չեն Չինաստանի տնտեսութեան զարգացումին, սակայն պիտի պաշտպանեն ամերիկեան ընկերութիւնները որեւէ ոտնձգութեան դէմ:

ՈՒԵՐԱՆԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԸ ԶՐԱԺԱՐԵՅԱԲ

Ուքրանիոյ երկրագործութեան նախարար Միքոլա Սուլսքի ներկայացուց իր հրաժարականը փտածութեան ամբաստանութեան մը պատճառով: Ան ձեռք դրած էր կառավարութեան պատկանող հողամասի մը վրայ ու իւրացուցած էր գայն:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՒ ԾԵՐԱԿՈՅՏԻ ՇՐՈՎԱԿԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԽՈՒՄԲԻՆ ԳԵԿԱՎԱՐԸ ԲՆՆԱՐԿԱԾ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ ՎԻԶԱՆԵՐՈՒ ԱԶԱՏԱԿԱՆԱՅՈՒՄԸ

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնեան ընդունած է Ֆրանսայի Հանրապետության Ծերակոյտի Ֆրանսա-Հայաստան բարեկամական խումբի ղեկավար Ժիլպեր-Լիլք Տըվինազի գլխավորած պատուիրակությունը: Ողջունելով հիւրերը՝ ԱԺ նախագահը գոհունակությամբ նշած է, որ Հայաստանը մեծապես կը կարելի է բարեկամ Ֆրանսայի անվերապահ աջակցությունը Հայաստանի միջազգային տարբեր հարթակներում մեջ:



«Կը փափաքեմ շնորհակալություն յայտնել 17 Յունուարին Ֆրանսայի Ծերակոյտին կողմէ «Լեռնային Ղարաբաղի մեջ Ատրպեյճանի ռազմական յարձակումը դատապարտելու, Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության խախտման եւ յարձակման հետագայ փորձերը կանխելու, Ատրպեյճանի դեմ պատժամիջոցներու կիրառման կոչ ընելու եւ հայ բնակչության՝ Լեռնային Ղարաբաղ վերադարձի իրաւունքի երաշխաւորումը պահանջելու վերաբերեալ» բազմակուսակցական բանաձեւի՝ բացարձակ մեծամասնութեամբ ընդունման համար: Սա շատ կարեւոր քայլ է հայ ժողովուրդին համար»,- նշած է խորհրդարանի ղեկավարը:

Ժիլպեր-Լիլք Տըվինազ նշած է, որ Ֆրանսան պատրաստ է ընդլայնելու Հայաստանի Հանրապետության աջակցող փոխգործակցության շրջանակը խորհրդարանական մակարդակի վրայ՝ ընդգծելով համագործակցությունը կրթության, մշակույթի, անվտանգության եւ այլ ոլորտներում մեջ:

Կը նշուի, որ կողմերը քննարկած են Հայաստան-ԵՄ վիզաներու ազատականացման գործընթացը, Հայաստան-ԵՄ յարաբերություններու սերտացման վերաբերող հարցերու լայն շրջանակ:

Անդրադառնալով անվտանգային իրավիճակին Հարավային Կովկասի մեջ՝ Ալեն Սիմոնեան բարձր գնահատած է Ֆրանսացի խորհրդարանականները՝ Հայաստանի մեջ Եւրոմիության դիտորդական առաքելութեան ուղեկցութեամբ իրականացուցած աշխատանքները, շնորհակալություն յայտնած է ցեղային զտման հետեւանքով Լեռնային Ղարաբաղէն Հայաստան տեղափոխուած անձերուն մարդասիրական օգնություն տրամադրելու համար:

Չորացակցները միտքեր փոխանակած են Հայաստանի պաշտպանողական կարողություններու զարգացման, անվտանգային եւ տնտեսական բազմազանացման հնարաւորություններուն շուրջ:

ՀՀ Ազգային ժողովին տեղեկացմամբ՝ հանդիպման ներկայ եղած է Հայաստան-Ֆրանսայ բարեկամական խումբի ղեկավար Վլատիմիր Վարդանեանը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒ ԻՏԱԼԻԱՆ ԲՆՆԱՐԿԱԾ ԵՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՅԵՐ

Պաշտօնական այցով 23-25 Ապրիլին Իտալիա գտնուած է Հայաստանի պաշտպանութեան նախարարի տեղակալ Կարեն Բրուտեանի գլխավորած պատուիրակութիւնը:



Պատուիրակութիւնը հանդիպումներ ունեցած է Իտալիոյ Պաշտպանութեան նախարարութեան սպառազինութեան ազգային տնօրէն եւ պաշտպանութեան գլխավոր քարտուղար, զորավար Լուչիանօ Փորթոլանոյի, Իտալիոյ պաշտպանութեան նախարարի տեղակալ Մաթեօ Փերելո տի Զրեմնակոյի, Զոնֆինտուսթրիայի օդատիեզերական, պաշտպանութեան ու անվտանգութեան ֆետերասիոնի նախագահ Ճուզեփիէ Զոսսիկայի, ինչպէս նաեւ ռազմարդիւնաբերական ընկերութիւններու ներկայացուցիչներուն հետ:

Հանդիպումներու ընթացքին քննարկուած են Հայաստան-Իտալիա ռազմական, ռազմագիտարուեստական, ռազմարհեստագիտական համագործակցութեան վերաբերող հարցեր, ձեռք բերուած են շարք մը պայմանաւորուածութիւններ:

ԳԵՐՄԱՆԻՅՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄԻՋԵՒ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԳԱԻՐԵԼՈՒ ՀՆԱՐԱԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱՐՉՐ ԳՆԱՀԱՏՈՒ Է

Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ խաղաղութեան համաձայնագրի ստորագրման հնարաւորութիւնները անելի քան երբեք մեծ են: Այս մասին յայտնած է Գերմանիոյ



վարչապետ Օլաֆ Շոլցը Պերլինի մեջ Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ կայացած մամուլի ասուլիսին: Անոր խօսքով՝ Ալիեւի հետ բանակցութիւններուն մեջ առաջին հերթին քննարկուած է Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ հակամարտութիւնը:

«Մենք միակարծիք ենք, որ այս հակամարտութիւնը պէտք է լուծուի խաղաղ ճանապարհով: Անոր հնարաւորութիւնները անելի քան երբեք մեծ են», - յայտնած է քաղաքական գործիչը:

«Մենք բարձր կը գնահատենք Ատրպեյճանի եւ Հայաստանի միջեւ ընթացող խաղաղութեան բանակցութիւնները»,- յայտնած է Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւը Գերմանիոյ վարչապետ Օլաֆ Շոլցի հետ համատեղ մամուլի ասուլիսին:

Յիշեցնելով, որ Հայաստանի եւ Ատրպեյճանի արտաքին գործերու նախարարները վերջերս հանդիպած են Գերմանիոյ մեջ՝ կանցելի Օլաֆ Շոլցի հրաւերով, Ալիեւ նշած է. «Յաջորդ հանդիպումը կը ծրագրուի Դազախըստանի մեջ: Այսպիսով, մենք յաւելեալ քայլեր կը ձեռնարկենք խաղաղութեան համաձայնագրի ստորագրման ուղղութեամբ»: Ան անդրադարձած է Հայաստանի եւ Ատրպեյճանի սահմանի միջեւ սահմանազատման խնդրին եւ նշած է, որ Ատրպեյճանին վերադարձուած են 1990 եւ 1992 թուականներուն գրաւուած չորս գիւղեր:

Ինչ կը վերաբերի այսօրուընէ Ադտամի մեջ ռուս-թրքական համատեղ դիտորդական գործունեութեան դադրեցման, Ատրպեյճանի նախագահը ընդգծած է. «Այսինքն՝ խաղաղութեան հասնելու շատ լաւ հնարաւորութիւններ կան: Մենք պատրաստ ենք համագործակցելու այն երկիրներուն հետ, որոնք կ'ուզեն մեզի աջակցիլ այս հարցին մեջ»:

ՊԵՏԱԿԱՆ ԴԱԲԱՃԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԸՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊԵՂՈՒՄ ՅԱՐՈՒՑՈՒԱԾ Է ԵՐԿՈՒ ԱՆՁԻ ՆԿԱՏԱՄԲ

Պետական դաւաճանութիւն կատարելու համար քրեական հետապնդում յարուցուած է Վահան Մարտիրոսեանի եւ Սիւզան Տաղինեանի նկատմամբ, անոնք կը հետախուզուին, յայտնած է քննչական կոմիտէն:




Ըստ հաղորդագրութեան՝ 2015 թուականի Սեպտեմբերին Վահան Մարտիրոսեանը ընտանիքով հատած է Հայաստանի պետական սահմանը, «թշնամական գործունեութիւն իրականացնելու համար» անցած է Ատրպեյճանի կողմը՝ մեկնած է Պաքո, ուր հանդիպած է ատրպեյճանական յատուկ ծառայութեան ներկայացուցիչներու հետ, եւ հաւաքագրուելով անոնց կողմէ՝ համագործակցութեան համաձայնագիր կնքած է, ապա անոնց յանձնարարութեամբ գանգուածային լրատուութեան միջոցներով հակահայկական ելոյթներ ունեցած է:

Բացի անկէ, ըստ ԶԿ-ի՝ ան կեղծ ընկերային ցանցերու միջոցով հիմնած է «խաղաղութեան հարթակ» կեղծ խորհրդով գաղափարախօսական կազմակերպութիւն, որուն մեջ հաւաքագրած է նաեւ Տաղինեանը: Ընկերակազմը կը շարունակէ՝ արդէն 2017թ. Տաղինեանը անցած է Ատրպեյճանի կողմը՝ մեկնած է Պաքո, հանդիպած է ռազմական ոլորտի ներկայացուցիչներու հետ, եւ «հաւաքագրուելով անոնց կողմէ՝ համագործակցութեան համաձայնագիր կնքած է, որմէ յետոյ գումարի դիմաց վերջիններուն յայտնած է պետական գաղտնիք պարունակող՝ ինչպէս Զարվաճառի գործարար, այնպէս ալ Հայաստանի Հանրապետութեան հետ կապուած տեղեկութիւններ»:

«ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ»-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆՆԱՐԿՆՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿԱՆՆԵՆ Է ԴԷՊԻ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ. ԱԼԵՆ ՍԻՄՈՆԵԱՆԸ՝ ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՓՈԽԵՕՍՆԱԿԻՆ

Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնեան ընդունած է Սուրիոյ Արաբական



Հանրապետութեան ժողովրդական ժողովի փոխնախագահ Մոհամմատ Աճլանիի գլխավորած պատուիրակութիւնը:

(Շար.ը տեսնել 4րդ էջ)

ՕՔԸՄՓՈՆ ՀԱՆԳԷՍ ԵԿԱԾ Է «ԼԵՆՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԷՆ ՀԱՅԵՐՈՒ ԲՈՒԻ ՏԵՂԱԿԱՆԱՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ» ԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԿԱ ԶԵԿՈՅՅՈՎ

Պունտեսթակի մարդու իրաւունքներու յանձնաժողովին մեջ Լահեյի Զրեական միջազգային դատարանի նախկին գլխավոր դատախազ Լուիս Մորելո Օքամպոս 25



Ապրիլին հանդէս եկած է «Լեռնային Ղարաբաղէն հայերու բռնի տեղահանման միջազգային իրաւական երեւոյթներ» թեմայի վերաբերեալ զեկոյցով:

Գերմանիոյ մեջ Հայաստանի դեսպանութեան տարածած հաղորդագրութեան մեջ կը նշուի, որ զեկոյցին յաջորդած է քննարկում Պունտեսթակի մարդու իրաւունքներու, արտաքին յարաբերութիւններու, իրաւական հարցերու, տնտեսական համագործակցութեան եւ զարգացման յանձնաժողովներու անդամ պատգամաւորներու մասնակցութեամբ: Ներկայ էին պատգամաւորներ Պունտեսթակի բոլոր խմբակցութիւններէն: Ըննարկումը կը վարեր մարդու իրաւունքներու յանձնաժողովի նախագահի տեղակալ Լորպեր Կլեյնքամփը:

Ըննարկման կը մասնակցէին նաեւ ՀՀ դեսպան Վիքթոր Ենգիբարտեանը, Գերմանահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սերոբէ Եպիսկոպոս Իսախանեանը եւ Գերմանահայոց կեդրոնական խորհուրդի նախագահ Յովնաթան Շփանկեպերկը:

ՊՈՒՆՏԵՍԹԱԿԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԻՆ ԿԱՐԾԻՔՈՎ՝ ԵՐՈՍԻՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿՐ ԲԻՒ ԵՄ-Ի ՇԱՐՅԵՐԵՆ

Գերմանիոյ Պունտեսթակի Եւրոպական միութեան հարցերով յանձնաժողովի նախագահ Թոնի Հովրեյթերը կարծիք յայտնած է, որ շարք մը երկիրներու, այդ շարքին՝ Հայաստանի Եւրոմիութեան անդամ դառնալը կը բխի Լոյնդըն ԵՄ-ի անվտանգութեան քաղաքականութեան շահերէն:



Այս մասին կը նշուի «Կանաչները Պունտեսթակի մեջ» X-ի էջով տարածած հաղորդագրութեան մեջ:

«Եւրոմիութեան անդամ դառնալը կը բխի ոչ միայն Ուլթրաիոյ, պալեանեան երկիրներու, Կրաստանի, Հայաստանի եւ Մոլտովայի Հանրապետութեան շահերէն, այլ նաեւ մեր իսկ անվտանգութեան քաղաքականութեան շահերէն», - գրած է ան:

(Շար.ը տեսնել 4րդ էջ)

ԱՊՐԻԼԵԱՆ ԽՈՐԵՐ ՈՒ ԱՆՄԻՏ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐ

Մեր ջերմ փափաքն է, որ հետագայ գազատույժան հրաւերը հասնի բոլոր «մտաւորականներուն», այսինքն՝ «մտաւորականութիւն խաղողներուն»: Բնականօրէն ան չէ ուղղուած իրա՛ւ մտաւորականութեան, որ դրական դեր կը խաղայ հանրային խօսույթի ձեւաւորման եւ ընդհանրապէս ակադեմական աշխատանքներու մէջ:

Նաե՛ւ՝ հայրենի «մտաւորականութեան» մասին գրուած այս յօդուածը հարազատօրէն կը ցուցնէ սփիւռքահայ «մտաւորականութիւնը»: Կասկած չունի՛նք:

«Խմբ.»

Հայաստանի մէջ օրէ օր կ'աճի ներքին լարուածութիւնը: Ատրալեյճանի հետ սահմանազատումի եւ գիւղեր յանձնելու հարցը աւելի կը սրէ իրավիճակը: Ստեղծուած կացութեան մէջ, երբ հասարակ մարդոց շատերը չեն գի-

ցին ու սպաննեցին, որմէ ետք ժողովուրդը ինկաւ կուսակցականացուած գրչակ-երգիչ-խմբագիրներու ձեռքը, որոնք կը «դաստիարակուէին» յանուն Լենինի ու Սթալինի՝ անոնցմէ դուրս բամբուլով իմացական եւ ազնուական միտքը, թողելով միայն գուարճատեր եւ քեֆ սիրող տրամադրութիւններ:

Թերեւս ճիշդ այդ է պատճառը, որ 1900-1950 թուականներուն արեւելեան ու արեւմտեան Հայաստանի մտաւորականութեան ջարդով «կարմիր» ու «երիտասարդ» թշնամիները ժողովուրդին աւիշը ծծեցին ու թողեցին այն անարիւն գանգուածը, որ բացի փողոցային անմակարդակ վեգոններէն, ոչինչ տալու ունակ է:

Թերեւս նաեւ այդ է պատճառը, որ այսօր Հայաստանի մէջ գոյութիւն չունի մտաւորականութիւն: Հաւաստելու կան խիստ սահմանափակ թիւով անհատ ստղծագործողներ



տեր, թէ ինչ կը կատարուի եւ ընդհանրապէս արդէն հատուց չեն ընծայեր քաղաքական գործիչներուն, անդին մտաւորականները կը մնան լուռ: Հանրապետութեան մէջ կան շատեր, որոնք յաւակնութիւն ունին մտաւորական կոչուելու, թե՛ 1991-էն ասդին կարելի է նշել դեպքեր, երբ «մտաւորականութիւնը» որեւէ պարագայի լուրջ կեցուածք արտայայտած կամ գործ կատարած ըլլայ: Մինչդէռ մեծ է անոր կարիքը:

Այս ծիրէն ներս, շատ զարմանալի է, թէ ո՛ր կորուսած են այն հարիւրաւոր գործերը, երգիչները, երաժիշտները, նկարիչները, գիտնականները, մէկ խօսքով այն բոլորը, որոնք խօսքն ու գործը պէտք է ըլլայ առօրէյան վեր, իսկ սկզբունքները՝ արդարութեան ու բարոյականութեան սահմանները:

Բացառիկ լուրջին ու խլուրդին կը տիրէ: «Մտաւորականներուն» երեցող հատուածին մեծ մասը անպիտան ստորագրահաւքներու տակ ստորագրելէ անդին ոչ մէկ քայլ կ'առնէ: Երգիչներու եւ դերասաններու մեծ մասը մեկնած է Միացեալ Նահանգներ: Մէկ խօսքով ոչինչ կը կատարուի: «Վաստակաւոր գործիչի» կոչում ստացած «մտաւորականները» ժողովուրդը ձգած են անտերութեան մէջ, բայց իրենց որ հարցնես, իրենք անընդհատ պայքարի մէջ կը գտնուին:

Ի հակադրութիւն այսօրուան այդ նեխած իրականութեան, 1900-ականներուն, մենք իրօք ունեինք մտաւորականութիւն: Ոչ թէ պարզապէս պալատական երգիչներ, որոնք պատրաստ են յանուն պատիւի ու գումարի երգելու ու խօսիլ, գրել միայն պատուերով: Մենք ունեինք մտաւորականներ, որոնք ուղղակի գրել-արտասանելով չէին զբաղած, այլ կը բաժնէին ժողովուրդին ճակատագիրը եւ իրենք զիրենք կը նկատէին պատասխանատու անոր: Կը զբաղէին անոր հոգեբանութեամբ ու չէին մեկուսանար հասարակ մարդոցմէ: Տակաւին, այդ ժամանակուան մտաւորականներու խօսքը եւս դաստիարակիչ էր, ուղղուած ոչ միայն հարուստներուն, այլեւ՝ պարզ ժողովուրդին: Ուստի գարմանալի չէ, որ պարզապէս այդ ոսկեայ սերունդը դարձաւ դասական եւ օրինակելի:

Պատմութեան քիչ թէ շատ ծանօթ մարդիկ գիտեն, որ 1915-ի Հայոց ցեղասպանութեան կազմակերպիչները նախ եւ առաջ մեկուսացուցին մտաւորականութիւնը, որովհետեւ շատ լաւ գիտէին այդ կիրթ ու ուսեալ մարդոց ներկայութեան արժեքը մեր ժողովուրդի կեանքին մէջ: Կը հակընդդէմը, որ Ռուբէն Սեւակը, Սիւսանյան, Վարուժանը եւ դէռ բազմաթիւ մտաւորականներ աւելի վտանգաւոր կրկնային ըլլալը քան հարիւր հազարոց զինուած բանակ մը: Որովհետեւ այդ մարդիկը ժողովուրդին խօսքն ու միտքը կը սրէին, զայն արթուն կը պահէին, հետեւաբար նաեւ մտաւորականութեան հասցուած հարուածը բնորոշուեցաւ որպէս «ժողովուրդին գլխատումը», իսկ անգլուխ ժողովուրդը ոչնչացնելը շատ դիւրին պիտի ըլլար: Մտաւորականները նաեւ զէնքը ձեռքներին կը պայքարէին թշնամիին դէմ, ինչպէս օրինակ նկարիչ Փանոս Թերլեմեզեանը կը կոտորէ Վանի մէջ:

Նոյնն էր պարզապէս արեւելեան Հայաստանի մէջ: «Վերնատան» հիմնադիր Յովհաննէս Թումանեանը, որ ժողովուրդին մեծ յարգանքը կը վայելէր, երբեք մէկ կողմ չբաշտեցաւ ու իր դժբախտութիւններուն համար չմեղադրեց մէկը ու չհայտնեց մէկուն: Թումանեանի մասին շատ բան կարելի է պատմել: Օրինակ, 1905-1907 թուականներու հայ-թաթարական բախումներուն ժամանակ, միայն իր հեղինակութեան շնորհիւ կրցաւ բազմաթիւ գիւղերու մէջ կռիւները դադարեցնել: Պատերազմի ժամանակ մէկ վայրկեան իսկ չդադարեց իր հասարակական գործունեութիւնը: Երբ երկրին մէջ ժողովուրդի ու տիֆի համաճարակ բռնկած էր, Թումանեան ամէն օր Էջմիածին կը գտնուէր սպանդէն փրկուած անօգնական որբ երեխաները խնամելով: Արդեօք կա՞յ այսօր նման մէկը:

Եւ ոչ միայն Թումանեանը: Բազմաթիւ էին իրա՛ւ մտաւորականները, որոնք մէկ կողմ դրած էին ամէն բան եւ մեծագոյն նուիրումով կը ծառայէին այն ժողովուրդին, որուն հանդէպ պարտաւորութիւններ ունէին:

Մտաւորականութեան դերին կարեւորութիւնը շատ լաւ ըմբռնեց նաեւ բուլշեփեան կուսակցութիւնը ու Նոյնինքն այդ պատճառով ալ ժողովուրդը գլխատելու փորձ տեղի ունեցաւ նաեւ արեւելեան Հայաստանի մէջ, երբ յատկապէս 1920-40-ական թուականներուն հազարաւոր կիրթ եւ գրագետ անձնավորութիւններ գնդակահարեցին, աքսորե-

ն ու գիտնականներ, բայց անոնք կամ շատ քիչ են, որ մտաւորական խաւ կազմեն, կամ այլ այլեւս ուժ չունին: Չարմանալի այն է, որ անընդհատ գանազան մրցանակաբաշխութիւնները, փառատներ տեղի կ'ունենան: Անծանօթ մարդիկ կը ստանան մրցանակներ, վկայագրեր ու հաւաստագրեր ու անհետ կը կորչին, մինչեւ յաջորդ տարուան մրցանակաբաշխութիւններ, որոնք յաճախ այնքան մեծ ու փքուն անուններ ունին, որ կը թուի, թէ ամբողջ տիեզերքով, որոնք փառք այդ կրկններուն: Մրցանակ շահողները ընդհանրապէս որեւէ ձեռքով կապ չունին մարդ կոչուելու աշխատանքին եւ չեն ալ կրնար, որովհետեւ իւրաքանչիւրը զբաղած է իր անձին ու իր անունին սպասարկելով, ծափ տալով հոն, ուր այդ պէտք է, եւ լռելով հոն, ուր կը վախճալ խօսել:

Մեր «մտաւորականները» երբեք չեն տեսներ գիւղացիի կողքին, չեն տեսներ զայն փողոցը բանուորի մը ու աղքատիւի մը կամ վաճառողի մը հետ: Չեն հանդիպիր իրեն ճշմարտութեան պայքարի մէջ՝ յանուն ճշմարտութեան: Կիցէն, ակնարկելով նման մարդոց, կ'ըսէր. «Ի՞նչ, մեծ մա՛րդ: Ես շարունակ միայն կը տեսնեմ իր խտելը կապկող դերասանը» (What? A great man? I always see only the actor of his own ideal): Եւ դժբախտաբար Հայաստան այժմ լեցուած է մեծ յաւակնութիւն ունեցող փոքր մարդոցմով, որոնք փառք ու ոսկի կը փորձեն ստեղծել դժբախտութիւններու պահուն: Կը բաւէ որ դժբախտ դէպք մը պատահի, զինուոր մը նահատակուի կամ այլ բան մը, ընկերային հրեցարկումներ կը կատարեն, բանաստեղծութիւններ կը գրեն եւ իրենք փոքրաթիւ ունկնդիրներուն հետ առցանց ողբ կը կազմակերպեն, յետոյ կը կորսուին: «Բաւական է բողոքել»,- խորհուրդ կու տան ամէն կողմէ, բայց մինչեւ ե՞րբ ծածկենք մեր կեղտերը:

Մշակութային այս խաչագողները խիստ վիրաւորուած են, որ տակաւին «տիեզերական վարդապետի» կոչում չեն ստացած ու հաւատաքննիչի դաժանութեամբ կը յարձակին ռեւէ մեկուն վրայ, որ իրենք գործերը չի հասնիր: Միաժամանակ այնքան մեծամիտ են, որ իրենք զիրենք կը համեմատեն ամէնէն մեծերուն: Ահա այս է մեր «անմիտ մտաւորականութիւնը», որ կը յաւակնի դաստիարակելու ժողովուրդը: Ամէնէն սարսափելի անշուշտ այն է, որ Նոյնինքն կիսագրագետ պոլիգրներ (bloggers), որոնք իրենք զիրենք համոզած են, թէ իրենք ամենագետ են ու կրնան ժողովուրդը շարժել: Եւ երբ զիրենք լսող չեն գտներ, կը կատողին ու կը հայտնեն, որ ժողովուրդը անմակարդակ է ու ապուշ:

Ինչպիսի դժբախտութիւն է, որ այս է մեր մտաւորականութիւնը՝ անգրագետ, լցիտ, տգետ, կուռարար, յաւակնուտ եւ մեծաբերան: Եւ անոնց ձեռքը գերի ինկած ժողովուրդին քաջացի տալով՝ զայն կը խրէն նորաստեղծ ուղղութիւններու (trends) ճահիճին մէջ, խեղճ ժողովուրդին միտքն ու հոգին դարձած է գործիք անոնց ձեռքին մէջ: Ու քանի որ անոնք չունին կարողութիւնը բարձրանալու վեր, ստիպուած ժողովուրդին մակարդակը կ'իջեցնեն վարձուորակ կարելի է, որ քննադատութիւն չլսեն, բողոքող չըլլայ, կարծիք չստեղծուի, այլ՝ մշակութային պարագայ մը, ուր ով ինչ ընէ՝ լաւ է ու մրցանակը՝ ապահոված:

Նար-դոս իր «Տանտիրոջ աղջիկը» գործին մէջ՝ վերլուծելով այլատերած բարքերը, այսպէս կ'աւարտէ զայն՝ «Եւ մինչեւ ե՞րբ պիտի շարունակուի այս սոսկալի երեւոյթը:

- Մինչեւ ե՞րբ: Մինչեւ որ, ինչպէս երբէ էլ ասացի, մի նոր ջրհեղեղ գայ եւ սրբի տանի քո գիծ-կեկելների, քո այանների ու արվանդի ամբողջ սերունդը իր բարքերով, սովորութիւններով, նախապաշարումներով, իր աղօթքներով ու անեծքներով եւ այլ տեսարաններով, որոնցից մէկին են ու դու հանդիսատես եղանք երբէ երբկոյ հիւնց այս փողոցում եւ այժմ՝ գրքացի բակում:
- Իսկ մինչ ա՞յդ:
- Իսկ մինչ այդ ես ու դու ի գուր կը նստենք չա՛նա թաւելու: Աշխարհաստան մի կատարողութիւն, որ քար քարի վրայ շնորհիւ,- ահա թէ ինչ է հարկաւոր:

Ինձ ուրիշ բան չէր մնում ասելու, եթէ ոչ համաձայնելու բարեկամիս եզրակացութեանը»:

Ի՞ՆՉ Է ՄՈՒՆՈՐԱԿԱՆ ԶԵՐՈՒՅՈՒՄԸ - RÉCHAUFFEMENT PLANÉTAIRE

Օր չ'անցնիր որ չլսես «կլիմայական ջերմացում-réchauffement climatique», «ջերմացային աղդեցութիւն», «ջերմացային կազեր» եւ նման արտայայտութիւններ: Բայց ի՞նչ է իրականութեան մէջ մոլորակային ջերմացում կոչուած երեւոյթը, որ այսօր իսկապէս դարձած է ստոյգ եւ այժմեական:

Այս երեւոյթին հիմնական պատճառը մթնոլորտի մէջ ջերմացային կոչուած կազերն են. les gazes à effet de serre, ի մէջ այլոց՝ ածխածին երկօքսիտ-CO2-dioxyde de carbone, մեթան եւ բորակածին պրօթօքսիտ-protoxyde d'azote, ինչպէս նաեւ CFC յապաւումով ծանօթ chlorofluorocarbone քիմիական բաղադրութիւնը, որ aerosol կոչուած անօթնէրու մէջ ճնշուած կազի ձեւով կը ներկայանայ, որ երկար տարիներ ծառայած է մասնաւորաբար վարսայարարումի մէջ իբրեւ օծանելիք: Այս վերջինը մթնոլորտի բարձր խաւերուն մէջ գտնուող ozone կազին հետ հակազդեցութեան ենթարկուելով, անոր պահպանող ազդեցութիւնը կ'ոչնչացնէ: Վերջին տարիներուն միջազգային ատեսներ արգիւած են CFC ի գործածութիւնը, սակայն ըստ որոշ տուեալներու անոր գործածութիւնը կատարելապէս չէ դադարած:

Ջերմացային ազդեցութիւնը կարենալ բացատրելու համար, նախ պէտք է վերլուծել, որ երկրագունտը Արեւի ճառագայթներու շնորհիւ է, որ կը տաքնայ: Այս ճառագայթներուն մեծամասնութիւնը մթնոլորտէն կ'անցնի առանց ներծծուելու, տաքցնելով ովկեանսներն ու ցամաքները: Անոր փոխարէն ցամաքը ներծծուած ճառագայթները կը վերադարձնէ իբրեւ ջերմութիւն՝ ակտիւ ինֆրաքարմիր շողարձակումի ձեւին տակ: Այս ջերմութեան մէկ մասն է, որ կը ներծծուի մթնոլորտի մէջ առկայ ջերմացային կազերու կողմէ: Յետեւաբար երկրի մակերեսէն արձակուած ուժանիւթը մթնոլորտի ցած խաւերուն մէջ արգելակուելով կը կուտակուի: Ջերմացային ազդեցութիւն կոչուած երեւոյթը ուրեմն մթնոլորտի ցած խաւերուն ջերմացումն է: Իրականութեան մէջ կեանքի երեւումը եւ գոյատեւումը սկիզբէն այս երեւոյթի շնորհիւ ապահովուած էր, քանի որ առանց անոր երկրագունտի միջին ջերմաստիճանը այսօրուան +15° ի փոխարէն պիտի ըլլար -18°:

Ի՞նչ բան է, որ կը խանգարէ այս բնական հաւասարակշռութիւնը: Պատճառները բազմաբնոյթ են: Երկրագունտի բնակչութիւնը վերջին տասնամեակներու ընթացքին արտասովոր ան արձանագրեց: Չարագացած երկիրներու ճարտարարուեստական անօրինակ եւ շմեցուցիչ արագ յառաջընթացը գլխաւոր ազդակն է այս հաւասարակշռութեան խախտումին: Չեք ձգուած արդիւնքը գալաջուցն է գլխաւորաբար միջոցներու, ճարտարարուեստական գործունեութեան, ջերմացման, տնավար վառելանիւթերու, նաեւ անտառներու հրկիզման միասնաբար արձակուած ածխածին երկօքսիտ կազի քանակութիւնը, տարեկան 7 միլիարդ թոնը կ'անցնի: Ջերմացային այս գլխաւոր կազին առանձին ներկայութիւնը մէկ դարի ընթացքին մէկ երրորդ համեմատութեամբ ան արձանագրած է ու այս աճը որ ըստ օրէ կ'արագանայ: Միւս կողմէ եզնարածութեան առաջընթացը եւ բրինձի մշակումը մթնոլորտի մեթան կազի քանակը կրկնապատկած են: Գալով երրորդ պատասխանատու կազին՝ protoxyde d'azote-ին, այս վերջինին մթնոլորտի մէջ կուտակումը գլխաւորաբար արդիւնքն է բորակածիւնով հարուստ պարարտանիւթերու խտացեալ գործածութեան, նաեւ պաղէցման ճարտարարուեստի եւ կերպակալ-plastique-ներու մէջ այս կազի լայն գործածութեան: Ուրիշ լուրջ պատասխանատու մըն ալ է անտառահատումը, քանի որ ծառերն են, որ անհրաժեշտ հաւասարակշռութիւնը կ'ապահովեն արձակուած ածխածին երկօքսիտը ներծծելու ուղղութեամբ:

Յետգիտէտ ալ աւելի շեշտակի բնոյթ ստացող ջերմացային կազերու կուտակումին անմիջական հետեւանքը՝ մասնաւորաբար գարգացումի շեմին գտնուող թերած երկիրներու մէջ օդի ջերմաստիճանի բարձրացումով կը յայտնուի: Երեւոյթ մը, որ կը միտի յառաջընթաց արձանագրել ապագայ տասնամեակներուն: Կարելի պիտի չըլլայ շատ հաւանաբար կանխել մթնոլորտի մէջ կուտակուած ածխածին երկօքսիտի այս դարավերջին կրկնապատկումը, Նոյնինքն քառասպատկումը աւելի ուշ:

Յետեւանքները բազմազան են գլխաւորաբար երկօքսիտի քանակի կրկնապատկումը կը թարգմանուի ջերմաստիճանի միջին հաշուով 1q5-3° բարձրացման, որ առիթ կ'ընծայէ հողաշերտերու կլիմայական կարեւոր փոփոխութիւններուն, ինչպէս աւելի սաստիկ տեղուներ-անձրեւներ- կամ աւելի ուժգին երաշտներ-sécheresse-:

Եւ հակառակ անցեալի կլիմայական բնական փոփոխութիւններու, այս մէկը պիտի ըլլայ աւելի արագընթաց, քանի որ ան տեղի պիտի ունենայ մասնաւորապէս մէկ դարաշրջանի մը ամառին, փոխապէս անցեալի բնական համարժեք կլիմայական փոփոխութիւններուն, որոնք կը յայտնուէին բազմաազար տարիներէ յետոյ: Այս իսկ պատճառաւ որոշ բնական համակարգեր, ինչպիսիս են անտառները, մեծ դժուարութիւն պիտի ունենան սոյն փոփոխութեան համակերպելու: Չգայուն հողամասերը, ինչպէս միջերկրականեան եւ հասարակածային գոտիները պիտի տառապին ջուրի աղբիւրներու լուրջ խանգարումներ:

Այլ հետեւանք. սառույցներու հալումին պատճառած ծովերու մակարդակի բարձրացումը եւ ովկեանոսի ընդլայնումը. այս վերջինը կը նախատեսուի 50 սմ-էն 1 մետրի միջեւ՝ ածխածին երկօքսիտի քանակին հաւանական կրկնապատկումին հետեւանքով: Պակասեցում, Մալտիւսեան կղզիները եւ Խաղաղականի բազմաթիւ կղզեակները շատ փափուկ կացութեան մը պիտի ենթարկուին: Ընդհանուր առմամբ, ծովու մակերեսին նկատմամբ յարաբերաբար ցած մակարդակ ունեցող հողամասեր, ինչպէս Հոլանտան, Իտալիոյ որոշ մասերը՝ Վենետիկը, եւ այլ երկիրներ

Համադրեց՝ ՍՈՒՐԵՆ ԾԵՐԻԵ

(Շարք տեսնել 4րդ էջ)

ԱՐԱՐԱԴ ԳԼԽԱՎՈՐ ԿՈՒՆԻՍԵՆ

ԿԻՆԵՐՈՒ ԶԵՄՓԻՆԸՆԸ ԼԻԿԻ ԿԻՍԱՎԱՐՍԱԿԱՆԻ ԵՐՔ ԶԵՆՍԻ ԵՒ ԼԻՈՆ ՅԱՂԹԵՑԻՆ

Երոպայի կիներու ֆուլթայի ակումբներու առաջնակարգ մրցաշարքի՝ Չեմփիոնզ Լիգի կիսավարսական հանգրուանի երթի առաջին մրցումին, մրցաշարքի ախոյեան Սպանիոյ «Պարսելոնա»-ն իր դաշտին վրայ ընդունեց Անգլիոյ «Չելսի»-ն: Թէեւ «Պարսելոնա» ուներ որոշ առաւելութիւն, սակայն «Չելսի» անելի արդիւնաւետ ձեռով գործող կազմն էր: Մրցումի 40-րդ վայրկեանին, սկզբնական կիսավարսական Զեմփըրը նշանակեց «Չելսի»-ի կողմ, գերմանացի կիսավարսական Նուսթըլի փոխանցումով: «Չելսի» տարաւ կարեւոր յաղթանակ մը, սակայն «Պարսելոնա»-ի նման վտանգաւոր յառաջապահ օղակ ունեցող խումբի մը դէմ մէկ կողմ տարբերութեամբ յաղթանակը վճռական արդիւնք չէ: Երկրորդ մրցումը իրարու դէմ հանեց Ֆրանսայի «Օլիմպիկ Լիոն»-ն եւ համերկրացի «Փարի Սեն ժերմեն»ը: Երկրորդ կսախաղին, «Օլիմպիկ» աշխուժացուց իր յառաջապահ օղակը եւ յարձակող Տիանի՝ 80-րդ, հայիթիցի կիսավարսական Տիանի՝ 85-րդ եւ փոխարինող կիսավարսական Մաթի՝ 86-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 3-2, աստղաբաշխ պաշտպան քարտիչները, պաշտպան Ռընարի եւ Տիանիի փոխանցումներով: «Օլիմպիկ Լիոն» տարաւ դժուար յաղթանակ մը պայքարող կազմի մը դէմ: Ստորեւ տեսնել արձանագրութիւնը արդիւնքները.

- Պարսելոնա (Սպ.) - Չելսի (Անգ.) 0-1
- Օլիմպիկ Լիոն (Ֆր.) - Փարի Սեն ժերմեն (Ֆր.) 3-2

ԶԵՄՓԻՆԸՆԸ ԼԻԿԻ 1/4-ՐԴ ԱՎԱՐՍԱԿԱՆԻ ԴԱՐՁ ԴՈՐՈՒՄԻՍԻԱ ԵՒ ՓԱՐԻ ՍԵՆ ԺԵՐՄԵՆ ՅԱՂԹԵՑԻՆ

Երոպայի ֆուլթայի ակումբներու առաջնակարգ մրցաշարքի՝ Չեմփիոնզ Լիգի քառորդ ավարտական հանգրուանի դարձի առաջին մրցումին, Գերմանիոյ «Պորուսիա Տորթմունտ»-ը իր դաշտին վրայ մրցեցաւ Սպանիոյ «Աթլետիքո»



Սատրիտ»-ի դէմ: Երթի մրցումին սպանական խումբը յաղթանակ տարած էր մէկ կողմ տարբերութեամբ: Ուրեմն, այս մրցումին «Պորուսիա» պէտք է յաղթեր երկու կամ անելի կողմերու տարբերութեամբ անցնելու համար յաջողօր փուլ: Մրցումի ընթացքին «Պորուսիա» ուներ առաւելութիւն եւ խումբը կրցաւ օգտագործել այդ առաւելութիւնը ու կոլ նշանակել: Կիսավարսական Պրանտը՝ 34-րդ եւ հոլանտացի պաշտպան Մաթթըն՝ 39-րդ վայրկեաններուն յառաջ տարին «Պորուսիա»-ն, պաշտպան Յիմըլզի եւ աստղաբաշխ կիսավարսական Սապիցըրի փոխանցումներով: Ապա, «Աթլետիքո» ճնշեց եւ 49-րդ վայրկեանին, պաշտպան Յիմըլզի չկրցաւ զսպել յարձակում մը ու սխալմամբ նշանակեց իր բերդին մէջ: 64-րդ վայրկեանին, փոխարինող արժանիքիցի յարձակող Քորրեա հաշիւը դարձուց 2-2: Սակայն, յարձակող Ֆուլքրիսկ՝ 71-րդ եւ Սապիցըր՝ 74-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 4-2, Սապիցըրի երկրորդ ու Ֆուլքրիսկի փոխանցումներով: «Պորուսիա» յաղթեց երկու կողմ տարբերութեամբ ու անցաւ յաջորդ փուլ: Օրուան երկրորդ մրցումին, Սպանիոյ «Պարսելոնա»-ն իր դաշտին վրայ ընդունեց Ֆրանսայի առաջատար «Փարի Սեն ժերմեն»ը: Երթի մրցումին, «Պարսելոնա» յաղթած էր մէկ կողմ տարբերութեամբ: Ուրեմն, «Փարի Սեն ժերմեն»-ին կը սպասէր դժուար գործ մը դարձի մրցումին: «Փարի Սեն ժերմեն» առաւելութիւն ունեցող կազմն էր ու կրցաւ օգտագործել այդ առաւելութիւնը կոլ նշանակելու համար: Մրցումի 12-րդ վայրկեանին, պրագիցի յարձակող Ռաֆինիա 12-րդ վայրկեանին յառաջ տարաւ «Պարսելոնա»-ն, յարձակող Լամին Եամալի փոխանցումով: Սակայն, 29-րդ վայրկեանին «Պարսելոնա» ծանր հարուած ստացաւ, երբ ուրուկուէյցի պաշտպան Արաուիսո կարմիր քարտ ստացաւ: «Փարի Սեն ժերմեն» կրցաւ օգտուիլ այդ թիկ պակասէն եւ յարձակող Տեմպէլ՝ 40-րդ, փորթուկալցի կիսավարսական Վիթիսիա՝ 54-րդ, յարձակող Սպափփէ տուգանայինով՝ 61-րդ եւ 89-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 1-4, յարձակող Պարբոլայի եւ մարոքցի պաշտպան Յաքիմի փոխանցումներով: «Փարի Սեն ժերմեն» շրջեց իր երթի մրցումի պարտութիւնը ու անցաւ յաջորդ փուլ: Սնժպանիոյ «Ռեալ մատրիտ»ը կրցաւ դուրս ձգել անցել տարուան ախոյեան Ազիլոյ «Մանչեսթըր Սիթի»-ն: Մրցումի հիմնական եւ երկարաձգութեամբ ժամանակները ավարտեցան 1-1 հաւասարութեամբ: «Ռեալ մատրիտ» յաղթեց տուգանային հարուածներով: 12-րդ վայրկեանին, պրագիցի յարձակող Ռոտրիկո նշանակեց երբ «Ռեալ մատրիտ»-ի կողմ, մինչ 76-րդ վայրկեանին պեճիքացի կիսավարսական Տէ Պրոյն հաշիւը դարձուց 1-1: Ստորեւ տեսնել արձանագրութիւնը արդիւնքները.

- Պորուսիա Տորթմունտ (Գեր.) - Աթլետիքո Մատրիտ (Սպ.) 4-2, երթ. 1-2
- Պարսելոնա (Սպ.) - Փարի Սեն ժերմեն (Ֆր.) 1-4, երթ. 3-2
- Պալյըն Միւնիխ (Գեր.) - Արսենալ (Անգ.) 1-0, երթ. 2-2

- Մանչեսթըր Սիթի (Անգ.) - Ռեալ մատրիտ (Սպ.) 1-1 տուգ. 3-4, երթ. 3-3
Կիսավարտական հանգրուանին պիտի մրցին հետեւեալ խումբերը.
Պալյըն Միւնիխ - Ռեալ մատրիտ
Պորուսիա Տորթմունտ - Փարի Սեն ժերմեն

ԻՐՈՐՓԱ ԼԻԿԻ 1/4-ՐԴ ԱՎԱՐՍԱԿԱՆԻ ԴԱՐՁ ՄԱՐՍԵՅ, ՌՈՄԱ, ՊԱՅԵՐ ԵՒ ԱԹԱԼԱՆԹԱ ԱՆՅԱՆ ԿԻՍԱՎԱՐՍԱԿԱՆ

Երոպայի ֆուլթայի ակումբներու երկրորդ մրցաշարքի՝ Իրորփա Լիգի քառորդ ավարտական հանգրուանի դարձի մրցումներուն, թէեւ «Լիվըրփուլ» իր դաշտէն դուրս միակ կողմ յաղթեց Իտալիոյ Պերլամոյի «Աթալանթա»-ին, սակայն երկու մրցումներու հաշիւով դուրս մնաց պայքարէն: Յաւասարակշռութեամբ մրցումին միակ կողմ նշանակեց եգիպտացի յարձակող Մոհամմատ Սալահ տուգանային հարուածով, 7-րդ վայրկեանին: Ստորեւ տեսնել արձանագրութիւնը արդիւնքները.
- Ռոմա (Իտ.) - ԱՄ Միլան (Իտ.) 2-1, երթ. 1-0
- Աթալանթա (Իտ.) - Լիվըրփուլ (Անգ.) 0-1, երթ. 3-0
- Ուեսթ Յեմ Եուն. (Անգ.) - Պայեր Լեվերքուզըն (Գեր.) 1-1, երթ. 0-2
- Օլիմպիկ Մարսէ (Ֆր.) - Պենֆիլթա (Փոր.) 1-0 տուգ. 4-2, երթ. 1-2
Կիսավարտական հանգրուանին պիտի մրցին հետեւեալ խումբերը.
Օլիմպիկ Մարսէ - Աթալանթա
Ռոմա - Պայեր Լեվերքուզըն

ԱՅՍՕՐՈՒՄԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

ԿԻՆԵՐՈՒ ԶԵՄՓԻՆԸՆԸ ԼԻԿԻ ԿԻՍԱՎԱՐՍԱԿԱՆԻ ԴԱՐՁ
19:30 Չելսի (6) - Պարսելոնա (1)
ԼԻԿԱՆԻ ԱՆՈՅՑԵԱՆՈՒԹԵԱՆ Բ. ՓՈՒԼԻ 8-ՐԴ ՅԱՆԳՐ.
16:00 Ալ Պըրճ (5) - Ալ Անսար (1)
16:00 Ալ Շապապ Դաքիլ (11) - Շապապ Ալ Սահել (8)
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՅՑԵԱՆՈՒԹԵԱՆ 31-ՐԴ ՅԱՆԳՐՈՒՄ
15:00 Վեսթ Արմենիա (7) - Արարատ-Արմենիա (3)
18:00 Շիրակ Կիմրի (9) - Նոա Արմավիր (1)
ԱՆԳԼԻՅՈՅ ԱՆՈՅՑԵԱՆՈՒԹԵԱՆ 35-ՐԴ ՅԱՆԳՐՈՒՄ
14:30 Ուեսթ Յեմ Եուն. (8) - Լիվըրփուլ (3)
17:00 Մանչեսթըր Եուն. (6) - Պըրսի (19)
22:00 Աթլետ Կլիվ (4) - Չելսի (9)
ՍՊԱՆԻՅՈՅ ԱՆՈՅՑԵԱՆՈՒԹԵԱՆ 33-ՐԴ ՅԱՆԳՐՈՒՄ
15:00 Լաս Փալմաս (13) - ժիրոնա (3)
17:15 Ալմերիա (20) - Խեթաֆէ (10)
22:00 Աթլետիքո Մատրիտ (4) - Աթլետիք Պիլասո (5)
ԻՏԱԼԻՅՈՅ ԱՆՈՅՑԵԱՆՈՒԹԵԱՆ 34-ՐԴ ՅԱՆԳՐՈՒՄ
19:00 Եուվենթիս (3) - ԱՄ Միլան (2)
21:45 Լացիո Ռոմա (7) - Վերոնա (15)
ԳԵՐՄԱՆԻՅՈՅ ԱՆՈՅՑԵԱՆՈՒԹԵԱՆ 31-ՐԴ ՅԱՆԳՐՈՒՄ
16:30 Պալյըն Միւնիխ (2) - Այլթըրախթ Ֆրանք. (6)
16:30 ՌՊ Լայփցիկ (4) - Պորուսիա Տորթմունտ (5)
19:30 Պայեր Լեվերքուզըն (1) - Շթուլթարթ (3)
ՖՐԱՆՍԱՅԻ ԱՆՈՅՑԵԱՆՈՒԹԵԱՆ 31-ՐԴ ՅԱՆԳՐՈՒՄ
22:00 Փարի Սեն ժերմեն (1) - Լը Յապը (16)
ՊԱՅԵՐԹՊՈՒԼԻ ԵՆ.ՊԻ.ԷՅ.-Ի ՇՐՁ.ՓԼԷՅ-ՕՏ
20:00 Օրլանտո Մեճիք (5) - Բիլվելետ Քալալիքըր (4)
22:30 Նիւ Օրլեանզ Փելիքընզ (8) - Օբլ. Սիթի Ռանտըր (1)
01:00 Մայամի Յիթ (8) - Պոսթըն Սելթիքս (1)
03:30 Ալ Լեյքըր (7) - Տենվըր Նակեց (2)
ԹԵՆԻՍԻ ՄԱՏՐԻՏԻ ՄԱՍՁԸՐԶԻ 1/32-ՐԴ ԱՎԱՐՍԱԿԱՆ
11:00-Եւ սկսեալ, «beinsports» կայանէն
ԴՅԵՆԼԱՐՇԱՒ
14:00 Tour De Romandie շրջաւ., «eurosport» կայանէն
ԱՅԼԵԹԻՉՍ
12:45 Ադամանդ Լիկայի Եանկեցի մրցում, «beinsports» կայանէն:

«ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ»-Ը...

(Շարունակում Բ. Էջէն)

«Սուրիացի ժողովուրդը անելի քան մէկ դար առաջ ապաստան տուաւ Օսմանեան կայսրութեան մէջ ցեղասպանութենէ մազապուրծ եղած հայերուն: Յատկանշալից է, որ ձեր այցը այն օրերուն է, երբ մենք կը նշենք Հայոց ցեղասպանութեան 109-րդ տարեկիցը», ողջունելով պատուիրակութիւնը՝ նշած է Ազգային ժողովի նախագահը:

Չրուցակիցները փաստած են հայ-սուրիական սերտ յարաբերութիւններուն մասին՝ հիմնուած ընդհանուր պատմութեան եւ արժեքներու վրայ:

Երկուստեք ընդգծուած է Սուրիա-Հայաստան խորհրդարանական դիւանագիտութեան արդիւնաւետ փոխհամագործակցութեան կարեւորութիւնը երկկողմ յարաբերութիւններու զարգացման լոյսին տակ:

Քննարկուած են Հայաստան-Սուրիա միջխորհրդարանական յարաբերութիւններու ընդլայնման հեռանկարները, Հայաստանի Կովկասի մէջ անվտանգային իրավիճակը:

Ալէն Սիմոնեան ընդգծած է, որ «Խաղաղութեան խաչմերուկ» նախագիծը Հայաստանի Հանրապետութեան տեսլականն է դեպի խաղաղութիւն:

«Տարածաշրջանին մէջ ստեղծուած իրավիճակը կը մարտահրաւիրէր յառաջ կը բերէ թէ՛ Հայաստանի, թէ՛ Սուրիոյ համար, ինչ որ կը պահանջէ կողմնակալ հաղորդել երկկողմ յարաբերութիւններուն: Այս առումով կը կարելի չէ Սուրիոյ հետ աշխոյժ համագործակցութիւնը խաղաղութեան գործընթացին մէջ», - ըսած է Ազգային ժողովի նախագահը:

Հանդիպման մասնակցած է նաեւ ԱԺ փոխնախագահ Յակոբ Արշակեանը:

ԻՆՉ Ե ՄՈՒՆՈՐԱԿԱՅԻՆ ՋԵՐՈՒՑՈՒՄԸ

(Շարունակում Գ. Էջէն)

Ինչպէս կասեցնել կամ արգելակել ահազանգ ներկայացնող այս կացութիւնը: Վերջին տարիներուն պարբերաբար գումարուող միջազգային գիտական եւ ճարտարաւետական վեհաժողովները (Kyoto; Montreal, Paris...) մասնաւորաբար ջերուցային կազմուած քանակը նուազեցընելու միտող պատժամիջոցները, ինչպէս նաեւ ապահովագրեր-prime առաջարկած են, սակայն այս միջոցառումները յառաջադէմ երկիրներու լուրջ ընդդիմութեան կը բախին, պարզ այն պատճառով, որ ճարտարարուեստականացումը-industrialisation դժբախտաբար հաշտ չէ բնապահպանումի հետ: Ջերուցային կազմուած քանակը պատեցնել կը նշանակէ որոնել նորանոր արտադրութեան ռեսուրսներ, ինչ որ ներկայ արագընթաց շրջանին դիւրահասանելի նպատակներ չեն: Այսօր քարիւղէ դուրս կը փոխարինուի արդիւնները, ինչպէս արեգակնային-solaire, հողմային-éolien, էլեկտրական ուժանիւթ, դեռ իրենց պարտադրող հանգրուանին մէջ չեն ներկայանար եւ մտատար ապագային կարող չեն փոխարինել դասական ուժանիւթ միջոցները, որոնք ջերուցային կազմուած եւ մասնաւորաբար CO2 կազի անհատուած արդիւններ կը հանդիսանան:

Առանց բոլորովին յոռետես ըլլալու, չենք կրնար լուրջ մտահոգութիւններ չունենալ ապագայ տասնամեակներու նկատմամբ, այսուհանդերձ յուսալով որ գիտական եւ արհեստագիտական նուաճումները հիմնական լուծում կ'ապահովեն այս լուրջ բնապահական գոյալիճակին:

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ...

(Շարունակում Բ. Էջէն)

Ան ատրպէյճանական յատուկ ծառայութեան պահանջով հարցազրոյց տուած է, որուն ընթացքին գովաբանած է այդ երկիրը եւ հակահայկական ելոյթներ ունեցած է, կը փոխանցէ հայաստանեան իրաւապահ կառույցը:

Անոնց նկատմամբ քրեական հետապնդում յարուցուած է, խափանման միջոց կիրառուած է կալանքը: Վերջիններս նկատմամբ յայտարարուած է հետախուզում:

Ազգային ժողովի Արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովը 2017-ին տեղեկացուցած էր, որ Պաշտօնի մէջ ընթացող Երանեսթ ԽՎ-ի համաժողովին Սիւզան Ջաղինեանը փորձած էր սադրել պատգամաւորներ Արմէն Աշոտեանին եւ Մանե Թանկիլեանին:

2015-ին ալ քննչականը հաղորդած էր, որ Ատրպէյճանի մէջ քաղաքական ապաստան հայցող Վահան Մարտիրոսեանը, որ ներկայացած էր որպէս «Ներազգային ազատագրական շարժում» քաղաքացիական նախաձեռնութեան ղեկավար, հետախուզման մէջ գտնուած էր: Անոր նկատմամբ քրեական գործը յարուցուած էր Զրեական օրէնսգիրքի 177-րդ յօդուածի երկրորդ մասի երկրորդ կէտի յատկանիշերով՝ «խոշոր չափերով գողութիւն»:

Նոր Մտորում
Մշակութային Մրտաբաժն

ԱՐԵԳ

ՊԱՐԱԽՈՒՄԻ ԵՆՈՅԹՆԵՐ

31 ՄԱՅԻՍ - 1 ՅՈՒՆԻՍ - 2 ՅՈՒՆԻՍ

AREK

ՀՈԳԵԶԱՆԳԻՍ

ՈՐԲ. ԸՆԿ ՄՈՒՐԱՏ ՊՕՅԱՃԵԱՆԻ մահուան քառասունեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Ապրիլ 2024-ին, Նոր Հանճոյ Սբ. Գեորգ եկեղեցոյ մէջ, յաւարտ Սբ. Պատարագի:

ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية | المحبرة المسؤولة: أني صرافيان
تصدر عن شركة مسيسر للمباعة والنشر (ش.م.م.)